«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

_____Է.Մ. Սանդոյան

«12» փետրվարի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Զավեն Գառնիկի Մարգարյանի «Ֆինանսական արդյունքների գնահատման բարելավման ուղիները (ՀՀ առևտրային բանկերի օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2026 թվականի փետրվարի 12-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 02-26):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Զախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Թուրյան Կարեն Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Գասպարյան Ռուբեն Լևոնի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Խաչատրյան Հովակիմ Խաչիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Հանիսյան Հրայր Հովիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Ստեփանյան Իվետա Կարենի**՝ ավագ դսասախոս, **Սիմոնայնա Ռամելա Ակսելի**՝ ավագ դասախոս, **Կարապետյան Անուշ Արմենի**՝ ավագ դասախոս, **Պապյան Զինավարդ Կարենի**՝ դասախոս, **Շմավոնյան Էլեն Հակոբի**՝ ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ բանկային համակարգի զարգացումն անխուսափելիորեն կապված է համաշխարհային նոր միտումներին հարմարվելու կարողությանը, ինչը ենթադրում է ֆինանսական ինստիտուտների գործառույթների արմատական վերափոխում՝ բանկերի ֆինանսական արդյունքները միասնացնելով կայուն զարգացման սկզբունքների հետ: Դա, նախ և առաջ, նշանակում է կազմակերպությունների, այդ թվում՝ բանկերի ռազմավարական պլանավորման և գործառնական գործունեության մեջ՝ արդյունքների գնահատման ընդհանուր համակարգում, որպես հիմնական ուղղություն, ներմուծել կայուն զարգացման հայեցակարգը՝ ըստ ԲՍԿ (բնապահպանական (Environmental), սոցիալական (Social) և կառավարման (Governance)) մոտեցման:

Ելնելով վերոնշյալից՝ ներկայացվող հետազոտության արժեքը պայմանավորված է հետևյալով. թեև մասնագիտական գրականության մեջ պատշաճ կերպով լուսաբանված են առևտրային կազմակերպությունների ֆինանսական արդյունքների տեսամեթոդական հիմքերը, այնուամենայնիվ, փոքր թիվ են կազմում այն աշխատությունները, որոնք նվիրված են կոնկրետ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծությանը՝ ըստ տեսամեթոդական հիմքի և առանձնահատկությունների, առավել ևս, այլ առևտրային բանկերի ու առևտրային կազմակերպությունների հետ համեմատության համատեքստում: Մասնավորապես՝ հայալեզու գրականության մեջ գրեթե բացակայում են այն աշխատությունները, որտեղ ուսումնասիրվում են առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների առանձնահատկություններն ըստ տեղայնացված մոտեցման: Մինչդեռ խնդրի հետազոտությունն այս դիտանկյունից ոչ միայն կարող է ամբողջապես վերափոխել կառավարման պատասխանատվության օրակարգը, այլև վերաձևակերպել ֆինանսական կազմակերպությունների արդյունավետության գնահատման հիմքը: Թեև հայաստանյան բանկերը «ձևականորեն» համապատասխանում են մի շարք նորմատիվ պահանջների, ԲՍԿ ցուցանիշների համակարգային ինտեգրման մակարդակը ներքին գործընթացներում՝ արդյունավետության գնահատման և որոշումների կայացման շրջանակում դեռևս մնում է ցածր: Մասնավորապես՝ բացակայում է միասնական ստանդարտացված մեթոդաբանությունը, որը կարող է հնարավորություն ընձեռել ԲՍԿ պարամետրերը ներառելու շահութաբերության, կապիտալի արժեքի և ակտիվների որակի վերլուծության մեջ: Դա սահմանափակում է ինչպես շահագրգիռ կողմերի կողմից արտաքին գնահատման, այնպես էլ բանկերի ներսում ռազմավարական պլանավորման հնարավորությունները:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն արմատական վերափոխումներով, որոնք տեղի են ունենում համաշխարհային ֆինանսական համակարգում, որտեղ ԲՍԿ գործոնները վերածվում են առևտրային բանկերի գործունեության արդյունքների գնահատման անբաժանելի տարրերի, և չնայած նրան, որ որոշ հետազոտողներ անդրադարձել են այս խնդրին, բայց անհրաժեշտություն կա մշակելու և առաջ քաշելու մոտեցումներ, որոնք կբարձրացնեն նաև ԲՍԿ գործոնների գնահատման արդյունավետությունը՝ դրանց տալով որոշակի չափելիություն: Առևտրային բանկերի ֆինանսական արդյունավետության գնահատման համակարգում ԲՍԿ մոտեցումների ինտեգրման խնդիրը մակրոտնտեսական կարգավորման, ռիսկերի կառավարման և կայուն զարգացման հատման կետում է, որը գիտագործնական կարևոր նշանակության հիմնահարց

է, իսկ լուծումը պահանջում է համալիր հետազոտություն, կիրառական գործիքակազմի մշակում և միջազգային փորձի հարմարեցում՝ հաշվի առնելով ազգային բանկային համակարգի առանձնահատկությունները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընդգծվում է թեմայի արդիականությունը, իսկ առաջ քաշված խնդիրների լուծման անհրաժեշտությունը խոսում է դրա արդյունքների կիրառման կարևորության մասին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման մոտեցումների գիտական ուսումնասիրմամբ դրանց կատարելագործման տեսական և կիրառական ուղիների մշակումն ու հիմնավորումը, այդ թվում՝ ԲՍԿ գործոնների շեշտադրմամբ, որոնք միտված են ֆինանսական վերլուծության, բանկային ռիսկերի կառավարման և կառավարչական հաշվետվողականության համակարգում կայուն զարգացման սկզբունքների ինտեգրմանը: Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ֆինանսական արդյունքների գնահատման տեսամեթոդական, ֆինանսատնտեսագիտական մեկնաբանություններն ու առանձնահատկություններն առևտրային բանկերում,
- բացահայտել և ներկայացնել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման հիմնախնդիրները, ցուցանիշները, մեթոդները, տեղեկատվական աղբյուրները,
- մեկնաբանել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող գործոնները,
- կատարել ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների կազմի և կառուցվածքի վերլուծություն,
- բացահայտել ֆինանսական ծառայությունների՝ շահույթի վրա ազդող քանակական գործոնների գնահատման հիմնախնդիրները,
- ներկայացնել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների ձևավորման վրա ազդող որակական գործոնների գնահատման հիմնախնդիրները,
- կատարված հետազոտությունների հիման վրա՝ առաջարկել գնահատման մեթոդների բարելավման ուղիներ, ինչպես նաև ԲՍԿ գործոնների միասնացում ֆինանսական գնահատմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման գործընթացի բարելավման և կատարելագործման ուղիների մշակումն է՝ ֆինանսական, ԲՍԿ և հաշվետվողական թափանցիկության գործոնների շեշտադրմամբ, որտեղ որպես գիտական նորույթ ներկայացված են հետևյալները.

- մշակվել է առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների և կայուն զարգացման ինտեգրված գնահատման մոտեցում՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական առումներով հաշվի առնելով արտաքին և ներքին տնտեսահիրավական ազդեցությունները, արժևորելով ԲՍԿ գործոնների կարևորությունը,

- մշակվել և հիմնավորվել է ԲՍԿ ակտիվների ռիսկով կշռված չափերի (ԲՍԿ-RWA) գործակիցը՝ որպես ֆինանսական արդյունքների բազմագործոնային գնահատման գործիք՝ կայուն զարգացման համատեքստում,
- մշակվել և առաջ է քաշվել բանկային գործունեության ֆինանսական արդյունքների ներքին հաշվետվողականության և կատարողականի գնահատման մոտեցում (KPI-ների վահանակ)՝ թիրախավորված ԲՍԿ-ԿՍՊ ցուցանիշներում, որոնք հիմնավորում են կառավարչական որոշումների ընդունումը,
- մշակվել և ներկայացվել է վերահսկողական հաշվետվողականության մոտեցում՝ ուղղված ԿԲ - առևտրային բանկեր փոխգործակցության համապարփակ և բազմագործոնային գնահատման հնարավորությանը՝ ԲՍԿ գործոնների գնահատման համատեքստում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության շրջանակում՝ հայաստանյան գիտական միջավայրում, առաջարկվում է կիրառել բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման համալիր մոտեցում՝ հիմնված ԲՍԿ գործոնների հաշվառման վրա, ինչը հնարավորություն կտա դուրս գալ ավանդական, բացառապես քանակական չափիչներին ուղղված հարացույցից: Հետազոտության շրջանակում առաջարկված մոտեցումները ստացել են մասնագիտական գնահատական և կիրառական վավերացում՝ միջազգային մասնագիտական կառույցի կողմից: Մասնավորապես, «Multidimensional Assessment of Financial Results of Commercial Banks Using ESG Factors» գիտական հոդվածում ներկայացված՝ ԲՍԿ–ռիսկով կշռված ակտիվների (ԲՍԿ-RWA) գործակցի կիրառումը, բանկի ղեկավար օղակի համար նախատեսված ԲՍԿ ներքին հաշվետվողականության համակարգի ձևավորումը, միջազգային մասնագիտական կառույցի՝ The ESG Institute-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Ջեյմ Ամոեդոի կողմից գնահատվել են գիտականորեն հիմնավոր, կիրառական նշանակության մոտեցումներ, որոնք ներդրվել և կիրառվել են The ESG Institute-ի կողմից իրականացվող ԲՍԿ խորհրդատվական և կառավարման վերապատրաստման ծրագրերում՝ միջազգային բանկային հաստատությունների հետ աշխատանքում (ասիական երկու և եվրոպական մեկ բանկում): Ատենախոսության շրջանակում մշակված գործիքակազմը, կատարված տեսամեթոդաբանական եզրակացությունները, կիրառական տեսանկյունից, իրատեսական են, ինչն էլ հետազոտությանը հաղորդում է թե՛ գիտական արժեք, թե՛ գործնական արդիականություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը շարադրված է 120 էջի վրա: Բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացության բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության

օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ֆինանսական արդյունքների գնահատման տեսամեթոդական հիմքերը»** գլխում քննարկվել են ֆինանսական արդյունքների գնահատման մոտեցումներն ու առանձնահատկություններն առևտրային բանկերում, ֆինանսական արդյունքների գնահատման մեթոդական հիմքը և տեղեկատվական ապահովվածությունը, ինչպես նաև ներկայացվել են առևտրային բանկերի գործունեության արդյունքների ֆինանսական և ԲՍԿ գործոնները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծության և գնահատման հիմնախնդիրները» գլխում** քննարկվել են ՀՀ առևտրային բանկերի և բանկային խմբերի ֆինանսական արդյունքների կազմի և կառուցվածքի վերլուծությունը, ֆինանսական ծառայություններից ստացված շահույթի քանակական գնահատման հիմնախնդիրները, ինչպես նաև առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների որակական գնահատման հիմնախնդիրները: Մասնավորապես հետազոտության են ենթարկվել՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-ն, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն և «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն: Առաջատար բանկերի ընտրությունը կայացել է՝ հաշվի առնելով հետազոտվող տարիների ընթացքում վերջիններիս կողմից արձանագրված ֆինանսական արդյունքները, ցուցանիշները, ինչպես նաև՝ ԲՍԿ նպատակային օգտագործման շրջանակներում բարձր արտաքին ֆինանսավորում ստանալու հանգամանքները:

Ատենախոսության երրորդ՝ **«Ֆինանսական արդյունքների գնահատման բարելավման մոտեցումները»** գլխում քննարկվել են ֆինանսական արդյունքների գնահատման հեռանկարային մոտեցումները, ինչպես նաև ֆինանսական արդյունքների գնահատման սցենարային վերլուծության մոտեցումների ներդրումը և կառավարումը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության բովանդակության 1.2. կետում ատենախոսը ոչ ամբողջական և ուղղակի կերպով ներկայացրել է ՀՀ Կենտրոնական բանկի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով սահմանված բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների անվանումները և կանոնակարգով սահմանված սահմանաչափեր, որը ատենախոսության գնահատելիության տեսանկյունից արդյունավետ չէ: Բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման և բարելավման ուղիների տեսանկյունից ատենախոսությունը կշահեր, եթե ատենախոսը բանկերի ֆինանսական արդյունքների վերաբերյալ ցուցանիշների հետ զուգահեռ ներկայացներ 2021-2024թթ.-ի բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները և դրանց շեղումների վերաբերյալ կատարեր համապատասխան վերլուծություններ և առաջարկություններ:
2. Մակրոպրուդենցիալ վերլուծությունը կոչված է ֆինանսական իրավիճակը նկարագրող ցուցանիշների միտումների ուսումնասիրման միջոցով բացահայտել ֆինանսական անկայունությունը, որի միջոցով հնարավոր կլինի խուսափել ճգնաժամից կամ

կրճատել ճգնաժամից դուրս գալու ծախսերը: Ցուցանիշների ընտրության կարևոր չափանիշ է հանդիսանում անկայուն վիճակից որոշ ժամանակահատված առաջ ցուցանիշի վարքագծի ակնհայտորեն փոփոխվելու, տնտեսության կամ բանկային համակարգի իրավիճակի վատթարացմանն արագ արձագանքելու ունակությունը: Բանկերը չեն գործում փակ միջավայրում և բանկերի գործունության ֆինանսական արդյունքները և հեռանկարային զարգացումը կախված են երկրի և մի շարք դեպքերում՝ գործընկեր երկների մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումից: Ատենախոսությունը կշահեր, եթե ատենախոսի կողմից իրականացվեր մակրոպրուդենցիալ վերլուծություններ և բանկային համակարգի ֆինանսական ցուցանիշների հետ միաժամանակ գնահատվեր այն հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք օգտագործվում են մակրոպրուդենցիալ վերլուծության ժամանակ:

3. Ատենախոսության բովանդակության 1.3. կետում ատենախոսը անդրադարձել է բանկերի գործունեության արդյունքների ֆինանսական և ԲՍԿ գործոններին, միաժամանակ ներկայացրել է բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը գնահատեր և իրականացներ համապատասխան վերլուծություններ կապված բնապահպանական և կլիմայական ռիսկերի ազդեցության մեծությանը ՀՀ բանկերի վրա: Հարկ է նշել, որ կլիմայական և բնապահպանական ռիսկերը ազդում են բանկի կողմից գյուղատնտեսական և հանքագործական արդյունաբերությանը տրամադրված վարկերի որակի վրա, ինչպես նաև բնապահպանական աղետները (կարկուտ, ջրհեղեղ) ազդում են այդ ոլորտներին տրամադրված վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճի վրա: Միաժամանակ անհրաժեշտ էր ատենախոսի կողմից կատարել հաշվարկներ, թե տարերային աղետների պատահարները մասնավորապես՝ կարկուտը և ջրհեղեղները որքանով են մեծացնում բանկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը և վարկերի գծով հատուկ պահուստի մեծությունը: Հարկ է նշել 30.11.2025թ.-ին գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմում է 379,826 մլն. ՀՀ դրամ և հանքագործական արդյունաբերությանը՝ 160,210մլն. ՀՀ դրամ, որը կազմում է բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումների մոտ 7 տոկոսը, (ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր 2025թ. նոյեմբեր, www.cba.am):

4. Ատենախոսության բովանդակության նույն 1.3. կետում ատենախոսը անդրադարձել է տեղեկատվական բանկային տեխնոլոգիաներին և թվային բանկային ծառայություններին:

   Բանկերը աստիճանաբար անցում են կատարում դեպի թվային բանկային ծառայությունների, որը բերում է նաև բանկերի գործառնական ծախսերի նվազեցմանը և մասնաճյուղերի քանակի օպտիմալացմանը: Թվային բանկինգին ամբողջական անցումը բանկում կբերի գործարար գործընթացների արդյունավետության բարձրացմանը, հաճախորդների սպասարկման տարածքի մեծացմանը, ծախսերի կրճատմանը, մրցունակության ապահովման աճին, սակայն կաճեն տեղեկատվական

անվտանգության և գործառնական ռիսկերը, որոնք բանկերի համար կարող են դառնալ համակարգային ռիսկեր, եթե բանկերը թվայանացման ընթացքում չներդնեն զգալի միջոցներ տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգերում և չապահովեն համակարգային ռիսկերի բացահայտման և արձագանքման համապատասխան համակարգերի առկայություն: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը իրականացներ համապատասխան վերլուծություններ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային բանկային ծառայությունների ազդեցությանը բանկերի գործունեության ֆինանսական արդյունքների վրա, միաժամանակ գնահատեր ՀՀ կենտրոնական բանկի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված պահանջների արդյունավետությունը և բանկերում տեղեկատվական ռիսկերի կառավարման գործընթացը:

5. Ատենախոսը ատենախոսության բովանդակության 2.1. ՀՀ առևտրային բանկերի և բանկայի խմբերի ֆինանսական արդյունքների կազմի և կառուցվածքի վերլուծության կետում կատարել է զգալի աշխատանք և վերլուծել է 2021-2024թթ-ի «Արդշինբանկ» ԲԲԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ և «ԱԿԲԱ Բանկ» ՓԲԸ-ի ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև գնահատել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքների ձևավորման ուղղություններն ու մասնաբաժինները և «ԱԿԲԱ Բանկ» ՓԲԸ-ի ֆինանսական արդյունքների կազմը և կառուցվածքը:
Աշխատանքը կշահեր, եթե ֆինանսական արդյունքների գնահատման տեսանկյունից ատենախոսը իրականացներ նաև նույն ժամանակահատվածում այդ բանկերի ստորև նշված հարաբերակցությունների վերլուծություններ՝
   - Զուտ տոկոսային եկամուտ/եկամտաբեր ակտիվներ
   - Զուտ տոկոսային և ոչ տոկոսային եկամուտ/ընդհանուր ակտիվներ
   - Զուտ տոկոսային + ոչ տոկոսային եկամուտ/ ոչ տոկոսային ծախսեր
   - Զուտ գործառնական եկամուտ/աշխատակիցների քանակ,
   - Վարչական ծախսեր և այլ ծախսեր/աշխատակիցների քանակ,
   - Ծախսեր/աշխատակիցների քանակ,

   Միաժամանակ բանկերի շահութաբերության գնահատման տեսանկյունից անհրաժեշտ էր վերլուծել տվյալ բանկերի եկամտաբերության որակը, գնահատել ակտիվների որակը (չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում) և ակտիվների գծով հնարավոր պահուստների մեծությունը, ինչպես նաև կատարել ստորև նշված հարաբերակցությունների վերլուծություններ՝
   - Չաշխատող վարկեր/վարկային ներդրումներ,
   - Ոչ եկամտաբեր ակտիվներ/ընդհանուր ակտիվներ,
   - Վարկերի գծով պահուստ/չաշխատող ակտիվներ:

6. Ատենախոսության բովանդակության 3.1. ֆինանսական արդյունքների գնահատման հեռանկարային մոտեցումները կետում ատենախոսը ներկայացրել է մշակված հաշվարկային բանաձևը, որը ուղակի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին» հաշվետվության մեջ ներառված բոլոր եկամտային հոդվածների և ծախսային հոդվածների հաշվարկման տարբերակ է:

Միաժամանակ ատենախոսության 3.1.1. աղյուսակում (Շահույթի գործոնային վերլուծություն «Ամերիաբանկ» ՓԲԸ 2021-2024թթ (մլրդ. ՀՀ դրամ) ներառված թվային մեծությունները ճշգրիտ չեն, օրինակ՝ Ծառայությունների մատուցումից հասույթ (Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը + այլ տոկոսային եկամուտ+միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ) 2021-2024թթ-ի տողում ներկայացված է համապատասխանաբար՝ 8,2081մլրդ. ՀՀ դրամ, 9,785 մլրդ. ՀՀ դրամ,13,173 ՀՀ դրամ և 16,380 մլրդ. ՀՀ դրամ, իսկ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հրապարակված ֆինանսական 31.12.2022թ. և 31.12.2024թ.հաշվետվություններում ներառված «*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված» հաշվետվություն մասում միայն* արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտը 2021-2024թթ-ի համար համապատասխանաբար կազմել է՝ 69,992,691 հազ.ՀՀ դրամ, 82,169,087 հազ.ՀՀ դրամ, 109,840,205 հազ.ՀՀ դրամ և 136,794,320 հազ.ՀՀ դրամ: Ատենախոսության 3.1.1. աղյուսակի Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախսը նույնպես չի համապատասխանում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հրապարակված ֆինանսական 31.12.2022թ. և 31.12.2024թ. հաշվետվություններում արտացոլված Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախսային գումարների մեծությանը:

Առաջարկներ

1. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը գնահատեր, ինչպիսի մեթոդաբանական մեխանիզմներ են անհրաժեշտ ներդնել բանկերում ԲՍԿ և կլիմայական ռիսկերի արդյունավետ կառավարման ու նվազեցման, ինչպես նաև ֆիզիկական և անցումային ռիսկերից բխող ֆինանսական, այդ թվում վարկային ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
2. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ԲՍԿ նպատակային օգտագործման գործոնների շրջանակներում ներկայացներ, արդյոք անհրաժեշտություն կա իրականացնել ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններ, մասնավորապես՝
   1.1. ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով սահմանված՝ բանկի կապիտալի համարժեքության, բանկի իրացվելիության նորմատիվների և պահանջի ու գրավի արժեքի սահմանային հարաբերակցության հաշվարկներում և չափերում,
   1.2. «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգում՝ վարկային ակտիվների դասակարգման տեսանկյունից, որը ուղղակի ազդեցություն է թողնում բանկերի ֆինանսական արդյունքների վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակության վրա:

Զավեն Գառնիկի Մարգարյանի «Ֆինանսական արդյունքների գնահատման բարելավման ուղիները (ՀՀ առևտրային բանկերի օրինակով)» թեմայով թեկնածական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում, այդ թվում՝ SCOPUS և Web of Science շտեմարաններում ընդգրկված 1 հոդվածում, ինչպես նաև 1 հոդված տպագրվել է միջազգային ամսագրում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Զավեն Գառնիկի Մարգարյանի «Ֆինանսական արդյունքների գնահատման բարելավման ուղիները (ՀՀ առևտրային բանկերի օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Է. Մ. Սանդոյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
«Էկոնոմիկայի և ֆինանսների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մ.Հ. Ոսկանյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ի. Բ. Պետրոսյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝ Հ.Խ. Խաչատրյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝ Հ.Հ. Հանիսյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ Ռ. Ս. Կասաբաբովա